



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴՍԱԲԱՆԻ ԹԻՎ 1 ԴՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

---

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Քաղ. Երևան

16 հուլիսի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Ա. Խաչատրյանի

Ա. Թունյանի

Ուսումնասիրելով «Ստարտ Մեդիա» ՍՊԸ-ի  
անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 42.1-րդ հոդվածի՝ «Ստարտ Մեդիա» ՍՊԸ-ն դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2015 թվականի հուլիսի 2-ին)՝ խնդրելով.

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1, 3, 5, 6, 18-րդ, 19-րդ, 27-րդ և 43-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 279-րդ հոդվածը, 16-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ պարբերությունը»:

Դիմողը գտնում է, որ իր կողմից վիճարկվող դրույթները չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին, ինչի արդյունքում խախտվել են իր սահմանադրական մի շարք իրավունքներ:

Դիմողը նշում է, որ առկա իրավակարգավորման պայմաններում ոչ միայն վերանում է անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունը, այլև չեն ապահովվում տեղեկատվության աղբյուրի բացահայտման պահանջի վերաբերյալ գործերով համապատասխան լրատվամիջոցների կամ լրագրողների դատավարական իրավունքների իրականացման երաշխիքները:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով եւ ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի եւ կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից, գտնում ենք, որ դիմումի հիման վրա գործը պետք է սահմանադրական դատարանի կողմից քննության ընդունվի մասնակիորեն՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

- այսպես, դիմումի եւ կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ պարբերության մասով դիմումն ակնհայտ անհիմն է: Դիմողն իր դիմումում նշել է, որ առաջին աստի դատարանը 26.06.2014 թվականի որոշմամբ մեջբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածը, մինչդեռ դատարանի որոշման մեջ այդ հոդվածին անդրադարձ չկա: Դիմողը չի ներկայացրել պատշաճ իրավական հիմնավորումներ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ: Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանա-

դրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության հիմնավորում:

Միաժամանակ, դիմողը չի հիմնավորել, թե վիճարկվող նորմի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՄԴՈ-839 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Հաշվի առնելով այն, որ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի 18.06.2015թ. ՄԴԴԿՈ/1-17 որոշմամբ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածի «այլ հաղորդումների» դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունվել է քննության և ՀՀ սահմանադրական դատարանի 2015 թվականի հունիսի 26-ի ՄԴԱՈ-42 աշխատակարգային որոշմամբ գործի դատաքննության օր է նշանակվել 2015 թվականի հոկտեմբերի 20-ը և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի պահանջներով՝ առաջարկում ենք հիշյալ գործին միավորել «Ստարտ Մեդիա» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործը:

Տեղեկացնում ենք, որ դիմողը նաև միջնորդություն է ներկայացրել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գործի դատաքննությունն անցկացնել բանավոր ընթացակարգով:

Հիմք ընդունելով վերոգրյալը եւ ելնելով քննության առարկա անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներից, գտնում ենք, որ դիմողը «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով, 41-րդ հոդվածի

2-րդ մասի 1-ին կետով, 279-րդ հոդվածով պահպանել է ՀՀ սահմանադրական դատարանի դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին.
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան.
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում.
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում.
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Քննության առարկա անհատական դիմումով միջնորդություն է ներկայացվել պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ, ինչը, մեր կարծիքով, հիմնավորված է:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31, 32, 39 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

### **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Ստարտ Մեդիա» ՍՊԸ-ի անհատական դիմումի հիման վրա՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 279-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ պարբերության մասով գործի քննության ընդունումը մերժել:

3. Առաջարկել «Ստարտ Մեդիա» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործը միավորել «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածի «այլ հաղորդումների»

դրությի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործին:

4. Բավարարել «Ստարտ Մեդիա» ՍՊԸ-ի անհատական դիմումով ներկայացված՝ պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդությունը:

5. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

16 հուլիսի 2015 թվականի  
ՄԴԴԿՈ/1-20